



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.: (37410) 561 554
Fax: (37410) 565 496

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 6
Հեռ.՝ (37410) 561 554
Ֆաքս՝ (37410) 565 496

0010, Երևան, Վազգեն Սարգսյան, 6
Тел.: (37410) 561 554
Факс: (37410) 565 496

21.01.2015 թ. N 23-06/000047-15

Ձեր N



ՀՀ փաստաբանների պալատի նախագահ
պարոն Արա Զոհրաբյանին

Հարգելի պարոն Զոհրաբյան,

Ինչպես գիտեք, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն փաստաբանները հանդիսանում են հաշվետվություն տրամադրող անձինք:

Միաժամանակ, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28-րդ հոդվածը սահմանում է, որ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում ներառված ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքը անմիջապես և առանց նշված անձանց տեղյակ պահելու ենթակա է սառեցման հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

Հաշվի առնելով փաստաբանական գործունեության առանձնահատկությունները, մասնավորապես՝ խորհրդատվության տրամադրելու, ինչպես նաև պայմանագրային հարաբերությունների պարագայում հաճախորդ չհանդիսացող մյուս կողմի վերաբերյալ որոշակի տեղեկատվություն (նվազագույնը՝ անուն, ազգանուն) տիրապետելու առումով, խիստ կարևորվում է ՀՀ բոլոր փաստաբանների կողմից Օրենքի վերը նշված դրույթի կատարումը: Վերջինս ենթադրում է հաճախորդների, հաճախորդների հետ գործարար հարաբերությունների մեջ գտնվող անձանց և ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում ընդգրկված անձանց անվանումների համընկման դեպքում գործարքի կամ գործարար հարաբերության սառեցում, այսինքն՝ փաստաբանի կողմից իրենից պահանջվող գործողությունների չկատարում և անհապաղ լիազոր մարմին կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվության տրամադրում:

Հայտնում ենք, որ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության հետ

կապված անձանց ցանկերը տեղադրված են ՀՀ կենտրոնական բանկի կայքէջի «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար» բաժնում և պարբերաբար թարմացվում են ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից: Բացի այդ փաստաբանները կարող են ՀՀ կենտրոնական բանկի կայքէջի «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար» բաժնում տեղադրված համակարգի միջոցով իրականացնել ցանկերում ներառված անձանց և իրենց հաճախորդների կամ հաճախորդների գործընկերների անվանումների ավտոմատ համեմատումներ (<https://www.cba.am/am/SitePages/fmcterroristslists.aspx>):

Այդ կապակցությամբ խնդրում ենք տեղեկացնել ՀՀ փաստաբանների պալատի կողմից արտոնագրված բոլոր փաստաբաններին, Օրենքի 28-րդ հոդվածով ամրագրված պարտավորության կատարման հետ կապված ՀՀ կենտրոնական բանկի կայքէջում տեղադրված համակարգի միջոցով որոնում իրականացնելու հնարավորության վերաբերյալ:

Բացի այդ, ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից մշակվել է ահաբեկչության հետ կապված անձանց նույնականացման տվյալների ավտոմատ համեմատման նվազագույն պահանջները սահմանող ալգորիթմ, որը հնարավորություն է տալիս որոշակի ավտոմատացված ծրագրային համակարգեր ունեցող կազմակերպություններին իրենց ծրագրային համակարգերում և ընթացակարգերում այն ներդնելու դեպքում, գործարքի վերաբերյալ տեղեկատվությունը այդ համակարգ մուտքագրելու պահին ավտոմատ եղանակով ստանալ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի հետ համեմատման արդյունքը:

Խնդրում ենք վերը նշվածի վերաբերյալ ևս իրազեկել ՀՀ փաստաբանների պալատի կողմից արտոնագրված բոլոր փաստաբաններին և ըստ անհրաժեշտության նրանց տրամադրել նշված ալգորիթմը:

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքով՝

Ֆինանսական դիտարկումների
կենտրոնի ղեկավար



Դանիել Ազատյան

Սույն գրության վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոն՝ 592933 հեռախոսահամարով: